**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղադիր, 4 փ. 4 շ., Հեռ. (094) 248414 ,
geghadir.kotayq@mta.gov.am

N 178
*11 սեպտեմբեր 2018թ.*

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն մարզպետ.

<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33 հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Գեղադիր համայնքի ավագանու 2018թվականի սեպտեմբերի 7-ի հերթական նիստի որոշումները:

Առդիր 25 թերթ:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Թ. Մուրդյան*

*Հեռ 096161060,077161037*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 սեպտեմբերի 2018թվականի N 31-Ա

### ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել համայնքի ավագանու 2018թվականի սեպտեմբերի 7-ի նիստի հետևյալ օրակարգը.
1)<<Գեղադիր համայնքի մանկապարտեզ>>համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը,աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
2)<<Գեղադիր համայնքի մանկապարտեզ>>համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու համար համայնքի ղեկավարի թեկնածուին համաձայնություն տալու մասին
3)Գեղադիր համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 26-ի N52-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ

ՆՈԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 սեպտեմբերի 2018թվականի N 32-Ա

### <<ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>>ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ,ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ , <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետերի՝համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել՝

1)Գեղադիր համայնքի ղեկավարի 2018թվականի օգոստոսի 4-ի <<Գեղադիր համայնքի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին N 42-Ա որոշումը.

2)<<Գեղադիր համայնքի մանկապարտեզ>> համանքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N 1-ի

3)Աշխատողների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝համաձայն հավելված N 2-ի

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 1
Գեղադիր համայնքի ավագանու 2018թ.
սեպտեմբերի 7-ի N32-Ա որոշման

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## «ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. « ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ հաստատություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հաստատություն է, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:

Հաստատության հիմնադիրն է Գեղադիր համայնքը՝ հանձինս համայնքապետարանի:

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

3. Հաստատության գտնվելու վայրն է՝ 2216, գ.Գեղադիր , 5-րդ փողոց , 1-ին նրբ. թիվ 7:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

6. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

7. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

8. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

9. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

## 2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

10. Հաստատության գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է:

11. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

12. Հաստատությունը, համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետելու նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և

ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

13. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

14. Հաստատությունը պատասխանատու է պետական չափորոշիչներին, նախակրթական պետական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:

15.Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ:

## 3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

16. Հաստատության երեխաների համակազմի համալրման կարգը և խմբերի առավելագույն խտությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով:

17. Հաստատություն ընդունվում են մինչև վեց տարեկան երեխաները՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում: Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք (խառը) խմբեր, որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան:

18. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան: Հաստատությունը կարող է մշակել և, նախարարության հետ համաձայնեցնելով, իրականացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:

19. Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխայի մնալու տևողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման և սննդի կազմակերպման կարգը որոշվում են նախարարության մեթոդական ցուցումներին համապատասխան: Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

20. Հաստատության երեխաների բժշկական սպասարկումն իրականացնում է հաստատության հաստիքային բժշկական աշխատողների միջոցով, որոնք տնօրինության հետ պատասխանատվություն են կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

21. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը համայնքի բյուջեի հաշվին պարբերաբար ենթարկվում են բժշկական քննության:

## 4. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

22. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները (օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները:

23. Երեխաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

24. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

25. Երեխայի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

26. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում:

27. Հաստատության աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները որոշվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, հաստատության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

28. Հաստատության աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու հաստատության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

## 5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

29. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

30. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

31. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) ավագանու համաձայնությամբ հաստատության հիմնադրումը.

2) հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

4) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

5) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

6) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

7) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

32. Համայնքի ղեկավարն իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

33. Համայնքի ղեկավարը՝

1) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է հաստատության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

5) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

6) համայնքի ավագանու որոշմամբ՝ հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձման համար.

7) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

8) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

34. Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ մանկավարժական խորհուրդ: Համայնքի և ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով հաստատությունում կարող են ստեղծվել ծնողական, հոգաբարձուների և այլ խորհուրդներ:

35. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

36. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

3) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

5) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

6) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

7) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

8) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

9) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

10) իրականացնում է մանկավարժական կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

11) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

12) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

13) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում կառավարման մարմինների հաստատմանը.

14) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և հաստատության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

37. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:

38. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝

1) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

2) ապահովում և վերահսկում է տիպային ծրագրի դրույթների և մեթոդական հանձնարարականնների կատարումը.

3) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.

4) կազմակերպում է մանկապարտեզի մեթոդ կաբինետի աշխատանքը.

5) ուսումնասիրում է դաստիարակների առաջավոր փորձը և ընդհանրացնում այն.

6) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին, ծանոթացնում մեթոդական հանձնարարականներին.

7) կազմակերպում է աշխատանք ծնողների շրջանում:

39. Դաստիարակը՝

1) պարտավոր է պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջության ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը.

2) պատասխանատու է երեխաների համակողմանի զարգացման և դաստիարակության համար.

3) մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

40. Երաժշտական ղեկավարը՝

1) տիպային ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է երեխաների երաժշտական դաստիարակությունը.

2) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում երեխաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

41. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝

1) կազմակերպում է մանկապարտեզի տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.

2) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.

3) հետևում է մանկապարտեզի տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.

4) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

## 6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

42. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

43. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

44. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

45. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

46. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

47. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

48. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, ավագանու որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավել՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են: Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

49. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

50. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

51. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, ծնողական վճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

52. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

53. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»

Հավելված 2

Գեղադիր համայնքի ավագանու 2018թ.
Սեպտեմբերի 7-ի N 32-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ<<ԳԵՂԱԴԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>>ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Աշխատակիցների քանակը` 13

| Հ/հ | Կազմակերպության վանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | <<Գեղադիրի մանկապարտեզ>> ՀՈԱԿ | Տնօրեն | Վարչական | 1 | 120000 | 120000 |
| | | Մեթոդիստ,ուսումնական գծով տեղակալ | քաղաքացիական | 0.5 | 36500 | 36500 |
| 2 | | Հաշվապահ | Քաղաքացիական | 1 | 73000 | 73000 |
| 3 | | Դաստիարակ | Քաղաքացիական | 2 | 89000 | 178000 |
| 4 | | Երաժիշտ | Քաղաքացիական | 0.5 | 36500 | 36500 |
| 5 | | Բուժքույր | Քաղաքացիական | 0.5 | 36500 | 36500 |
| 6 | | Խոհարար | Տեխնիկական սպասարկման | 1 | 73000 | 73000 |
| 7 | | Խոհարարի օգնական | Տեխնիկական սպասարկման | 1 | 73000 | 73000 |
| 9 | | Գիշեր. Պահակ-բակապան | Տեխնիկականսպասարկման | 1 | 73000 | 73000 |
| 10 | | Դաստիարակ իօգնական | Տեխնիկական սպասարկման | 2 | 73000 | 146000 |
| 11 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | 0.5 | 36500 | 36500 |
| | Ընդամենը | 13 | | 11 | 720 000 | 882 000 |

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ

| | ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎԸ |
|---|---|---|
| 1. | Ընդհանուր նշանակության նախադպրոցական հաստատություններում(մանկապարտեզներում, որտեղ իրականացվում են նախադպրոցական կրթական ծրագրեր և ապահովվում է երեխաների խնամքը)<br>3-ից 6 տարեկան | 25-30 |
| 2. | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ֆիզիկական և հոգեկան զարգացման շտկողական աշխատանքների կարիք ունեցող ) երեխաների թվի ծանրաբեռնվածության առավելագույն խտությունը սահմանվում է՝<br>3-6 տարեկան | Մինչև 3 երեխա |

Ելնելով տեղական պայմաններից և առանձնահատկություններից, հիմնադրի կողմից կարող են սահմանվել երաշխավորվածից ցածր խտությամբ խմբեր՝ հիմնադրի կողմից լրացուցիչ բյուջետային միջոցների կամ հաստատության արտաբյուջեի առկայության դեպքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 սեպտեմբերի 2018թվականի N 33-Ա

## <<ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝համայնքի ավագանին որոշում է

1.Համաձայնություն տալ <<Գեղադիր համայնքի մանկապարտեզ>>համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու համայնքի ղեկավարի ներկայացրած՝Մարինե Հովակիմի Գրիգորյանի թեկնածությանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 սեպտեմբերի 2018թվականի N 34-Ն

## ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՄ 2017ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N52-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետերի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Գեղադիր համայնքի 2017թվականի դեկտեմբերի 26-ի <<Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի 2018թվականի բյուջեն հաստատելու մասին>>52-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն.
1)որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԳԵՂԱԴԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

# 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

Հաստատված է

Գեղադիր համայնքի ավագանու

2017թվականի 26 դեկտեմբերի N 52-Ն որոշմամբ
Փոփոխված համայնքի ավագանու
7 սեպտեմբերի 2018թ. N 34-Ն որոշմամբ

ՀՀ ֆին. նախ.գործառնական վարչություն
(համայնքի բյուջեն սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքի անվանումը)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ ԳԱԳԻԿԻ
(անունը, ազգանունը, հայրանունը)

Կ. Տ.

# ՀԱՏՎԱԾ 1
# ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

(հազար դրամով)

| Տողի N | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200 + տող 1300) այդ թվում՝ | | 18655.1 | 18655.1 | 0.0 |
| 1100 | 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող 1160), այդ թվում՝ | 7100 | 4445.0 | 4445.0 | x |
| 1110 | 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112), այդ թվում՝ | 7131 | 1645.0 | 1645.0 | x |
| 1111 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | | 245.0 | 245.0 | x |
| 1111Ա | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար (ֆիզիկական անձանցից) | | 245.0 | 245.0 | x |
| 1112 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | | 1400.0 | 1400.0 | x |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից, այդ թվում՝ | 7136 | 2400.0 | 2400.0 | x |
| 1121Բ | Գույքահարկ փոխադրամիջոցների համար (ֆիզիկական անձանցից) | | 2400.0 | 2400.0 | x |
| 1130 | 1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ, այդ թվում՝ | 7145 | 400.0 | 400.0 | x |
| 1131 | Տեղական տուրքեր, (տող 1132 + տող 1135 + տող 1136 + տող 1137 + տող 1138 + տող 1139 + տող 1140 + տող 1141 + տող 1142 + տող 1143 + տող 1144 + տող 1145), այդ թվում՝ | 71452 | 400.0 | 400.0 | x |
| 1137 | դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և/կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար | | 48.0 | 48.0 | x |
| 1137Ա | - Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և(կամ)ծխախոտի արտադրանքիվաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում ոգելից խմիչքների և (կամ ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար | | 24.0 | 24.0 | x |
| 1137Բ | - ծխախոտի արտադր. վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | | 24.0 | 24.0 | x |
| 1139 | զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի | | 300.0 | 300.0 | x |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | վաճառքի թույլտվության համար | | | | |
| 1140 | է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար | | 22.0 | 22.0 | x |
| 1140Բ | -հանրային սնունդի և զվարճանքի օբյեկտների համար | | 22.0 | 22.0 | x |
| 1142 | թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար | | 30.0 | 30.0 | x |
| 1142թ | արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար | | 30.0 | 30.0 | x |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260), այդ թվում՝ | 7300 | 12010.1 | 12010.1 | 0.0 |
| 1250 | 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, (տող 1251 + տող 1254 + տող 1257 + տող 1258), որից՝ | 7331 | 12010.1 | 12010.1 | x |
| 1251 | ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | | 12010.1 | 12010.1 | x |
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390), այդ թվում՝ | 7400 | 2200.0 | 2200.0 | 0.0 |
| 1330 | 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1333 + 1334), այդ թվում՝ | 7415 | 150.0 | 150.0 | x |
| 1331 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ | | 150.0 | 150.0 | x |
| 1350 | 3.5 Վարչական գանձումներ, (տող 1351 + տող 1352), այդ թվում՝ | 7422 | 2050.0 | 2050.0 | x |
| 1351 | Տեղական վճարներ | | 1050.0 | 1050.0 | x |
| 1351Բ | -տեղական վճարներ աճուրդի մասնակցելու համար | | 50.0 | 50.0 | x |
| 1351Դ | Տեղական վճար աղբահանության համար | | 1000.0 | 1000.0 | x |
| 1352 | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | | 1000.0 | 1000.0 | x |

**Տ ե ղ ե կ ու թ յ ու ն ն ե ր**

**գույքահարկի և հողի հարկի, հողերի և այլ գույքի վարձակալության վարձավճարների գծով առանձին ցուցանիշների վերաբերյալ**

| Տողի NN | Եկամտատեսակները | ապառքը տարեսկզբի դրությամբ | ապառքը տարեվերջի դրությամբ | տվյալ տարվա հաշվարկային գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 200.0 | 45.0 | 245.0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողերի համար | 1200.0 | 200.0 | 1400.0 |
| 3 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 2400.0 | 0 | 2400.0 |
| 4 | Հողերի վարձակալության վարձավճարներ | | | X |
| 5 | Այլ գույքի վարձակալության վարձավճարներ | | | X |

## ՀԱՏՎԱԾ 2
## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

(ճշտված 07/09/2018թ. դրությամբ) (հազար դրամով)

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը (ս.7+ս.8) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 2100 + տող 2200 + տող 2300 + տող 2400 + տող 2500 + տող 2600 + տող 2700 + տող 2800 + տող 2900 + տող 3000 + տող 3100) | 20404.3 | 18655.1 | 1749.2 |
| 2100 | 1 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (այլ դասերին չպատկանող) (տող 2110 + տող 2120 + տող 2130 + տող 2140 + տող 2150 + տող 2160 + տող 2170 + տող 2180) այդ թվում՝ | 16894.3 | 16645.1 | 249.2 |
| 2110 | 1 | 1 | 0 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ որից՝ | 16652.3 | 16403.1 | 249.2 |
| 2111 | 1 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում | 16652.3 | 16403.1 | 249.2 |
| 2130 | 1 | 3 | 0 | Ընդհանուր բնույթի ծառայություններ, որից՝ | 92.0 | 92.0 | 0.0 |
| 2133 | 1 | 3 | 3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 92.0 | 92.0 | 0.0 |
| 2160 | 1 | 6 | 0 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող), որից՝ | 150.0 | 150.0 | 0.0 |
| 2161 | 1 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 150.0 | 150.0 | 0.0 |
| 2200 | 2 | 0 | 0 | ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (այլ դասերին չպատկանող) (տող 2210+2220 + տող 2230 + տող 2240 + տող 2250), այդ թվում՝ | 100.0 | 100.0 | 0.0 |
| 2210 | 2 | 1 | 0 | Ռազմական պաշտպանություն, որից՝ | 50.0 | 50.0 | 0.0 |
| 2220 | 2 | 2 | 0 | Քաղաքացիական պաշտպանություն, որից՝ | 50.0 | 50.0 | 0.0 |
| 2221 | 2 | 2 | 1 | Քաղաքացիական պաշտպանություն | 50.0 | 50.0 | 0.0 |
| 2250 | 2 | 5 | 0 | Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող), որից՝ | 50.0 | 50.0 | 0.0 |
| 2251 | 2 | 5 | 1 | Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | 50.0 | 50.0 | 0.0 |
| 2300 | 3 | 0 | 0 | ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ (տող 2310 + տող 2320 + տող 2330 + տող 2340+տող 2350 + տող 2360 + տող 2370), այդ թվում՝ | 50.0 | 50.0 | 0.0 |
| 2320 | 3 | 2 | 0 | Փրկարար ծառայություն, որից՝ | 50.0 | 50.0 | 0.0 |
| 2321 | 3 | 2 | 1 | Փրկարար ծառայություն | 50.0 | 50.0 | 0.0 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2400 | 4 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 2410 + տող 2420 + տող 2430 + տող 2440 + տող 2450+տող 2460 + տող 2470 + տող 2480 + տող 2490), այդ թվում՝ | -1186.0 | 0.0 | -1186.0 |
| 2450 | 4 | 5 | 0 | Տրանսպորտ, որից՝ | 950.0 | 0.0 | 950.0 |
| 2451 | 4 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | 950.0 | 0.0 | 950.0 |
| 2490 | 4 | 9 | 0 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող), որից՝ | -2136.0 | 0.0 | -2136.0 |
| 2491 | 4 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | -2136.0 | 0.0 | -2136.0 |
| 2500 | 5 | 0 | 0 | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող 2510 + տող 2520 + տող 2530 + տող 2540 + տող 2550 + տող 2560), այդ թվում՝ | 1000.0 | 1000.0 | 0.0 |
| 2510 | 5 | 1 | 0 | Աղբահանում, որից՝ | 1000.0 | 1000.0 | 0.0 |
| 2511 | 5 | 1 | 1 | Աղբահանում | 1000.0 | 1000.0 | 0.0 |
| 2600 | 6 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող 2610 + տող 2620 + տող 2630 + տող 2640 + տող 2650 + տող 2660), այդ թվում՝ | 360.0 | 360.0 | 0.0 |
| 2640 | 6 | 4 | 0 | Փողոցների լուսավորում, որից՝ | 360.0 | 360.0 | 0.0 |
| 2641 | 6 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | 360.0 | 360.0 | 0.0 |
| 2800 | 8 | 0 | 0 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող 2810 + տող 2820 + տող 2830 + տող 2840+ տող 2850 + տող 2860), այդ թվում՝ | 150.0 | 150.0 | 0.0 |
| 2820 | 8 | 2 | 0 | Մշակութային ծառայություններ, որից՝ | 150.0 | 150.0 | 0.0 |
| 2824 | 8 | 2 | 4 | Այլ մշակութային կազմակերպություններ | 150.0 | 150.0 | 0.0 |
| 2900 | 9 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող 2910 + տող 2920 + տող 2930 + տող 2940+ տող 2950 + տող 2960 + տող 2970 + տող 2980), այդ թվում՝ | 2736.0 | 50.0 | 2686.0 |
| 2910 | 9 | 1 | 0 | Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն, որից՝ | 2736.0 | 50.0 | 2686.0 |
| 2911 | 9 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | 2736.0 | 50.0 | 2686.0 |
| 3000 | 10 | 0 | 0 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող 3010 + տող 3020 + տող 3030 + տող 3040 + տող 3050+ տող 3060 + տող 3070 + տող 3080 + տող 3090), այդ թվում՝ | 300.0 | 300.0 | 0.0 |
| 3070 | 10 | 7 | 0 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) , որից՝ | 300.0 | 300.0 | 0.0 |
| 3071 | 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | 300.0 | 300.0 | 0.0 |
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող 3110), այդ թվում՝ | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3110 | 11 | 1 | 0 | ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ , որից՝ | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 0.0 | 0.0 | 0.0 |

# ՀԱՏՎԱԾ 3
# ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

(հազար դրամով)

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 4050 + տող 5000 + տող 6000) այդ թվում՝ | x | 20404.3 | 18655.1 | 1749.2 |
| 4050 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ (տող 4100 + տող 4200 + տող 4300 + տող 4400 + տող 4500 + տող 4600 + տող 4700) այդ թվում՝ | x | 18655.1 | 18655.1 | x |
| 4100 | 1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (տող 4110 + տող 4120 + տող 4130) այդ թվում՝ | x | 14958.0 | 14958.0 | x |
| 4110 | ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ (տող 4111 + տող 4112 + տող 4114) որից՝ | x | 14958.0 | 14958.0 | x |
| 4111 | -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 12800.0 | 12800.0 | x |
| 4112 | - Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ | 4112 | 2158.0 | 2158.0 | x |
| 4200 | 1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ (տող 4210 + տող 4220 + տող 4230 + տող 4240 + տող 4250 + տող 4260), այդ թվում՝ | x | 3387.1 | 3387.1 | x |
| 4210 | ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ (տող 4211 + տող 4212 + տող 4213 + տող 4214 + տող 4215 + տող 4216 + տող 4217), որից՝ | x | 1818.1 | 1818.1 | x |
| 4211 | - Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր | 4211 | 50.0 | 50.0 | x |
| 4212 | - Էներգետիկ ծառայություններ | 4212 | 609.1 | 609.1 | x |
| 4213 | - Կոմունալ ծառայություններ | 4213 | 1050.0 | 1050.0 | x |
| 4214 | - Կապի ծառայություններ | 4214 | 109.0 | 109.0 | x |
| 4230 | ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ (տող 4231 + տող 4232 + տող 4233 + տող 4234 + տող 4235 + տող 4236 + տող 4237 + տող 4238), որից՝ | x | 694.0 | 694.0 | x |
| 4232 | - Համակարգչային ծառայություններ | 4232 | 92.0 | 92.0 | x |
| 4234 | - Տեղակատվական ծառայություններ | 4234 | 40.0 | 40.0 | x |
| 4235 | - Կառավարչական ծառայություններ | 4235 | 252.0 | 252.0 | x |
| 4238 | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 310.0 | 310.0 | x |
| 4240 | ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ (տող 4241), որից՝ | x | 90.0 | 90.0 | x |
| 4241 | - Մասնագիտական ծառայություններ | 4241 | 90.0 | 90.0 | x |
| 4250 | ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (ծառայություններ և | x | 205.0 | 205.0 | x |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | նյութեր) (տող 4251 + տող 4252), որից՝ | | | | |
| 4252 | - Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | 205.0 | 205.0 | x |
| 4260 | ՆՅՈՒԹԵՐ (տող 4261 + տող 4262 + տող 4263 + տող 4264 + տող 4265 + տող 4266 + տող 4267 + տող 4268), որից՝ | x | 580.0 | 580.0 | x |
| 4261 | - Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 100.0 | 100.0 | x |
| 4264 | - Տրանսպորտային նյութեր | 4264 | 430.0 | 430.0 | x |
| 4268 | - Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 50.0 | 50.0 | x |
| 4600 | 1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ (տող 4610 + տող 4630 + տող 4640), այդ թվում՝ | x | 300.0 | 300.0 | x |
| 4630 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ) (տող 4631 + տող 4632 + տող 4633 + տող 4634), որից՝ | x | 300.0 | 300.0 | x |
| 4634 | - Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 300.0 | 300.0 | x |
| 4700 | 1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ (տող 4710 + տող 4720 + տող 4730 + տող 4740 + տող 4750 + տող 4760+ տող 4770), այդ թվում՝ | x | 10.0 | 10.0 | x |
| 4710 | ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ (ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (տող 4711 + տող 4712), որից՝ | x | 10.0 | 10.0 | 0.0 |
| 4711 | - Տնային տնտեսություններին ծառայություններ մատուցող՝ շահույթ չհետապնդող կազմակերպություններին նվիրատվություններ | 4811 | 0.0 | 0.0 | x |
| 4712 | - Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 4819 | 10.0 | 10.0 | x |
| 5000 | Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ (տող 5100 + տող 5200 + տող 5300 + տող 5400), այդ թվում՝ | x | 3885.2 | x | 3885.2 |
| 5100 | 1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 5110 + տող 5120 + տող 5130), այդ թվում՝ | x | 3885.2 | x | 3885.2 |
| 5110 | ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 5111 + տող 5112 + տող 5113), որից՝ | x | 950.0 | 0.0 | 950.0 |
| 5112 | - Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | 950.0 | x | 950.0 |
| 5120 | ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ (տող 5121 + տող 5122 + տող 5123), որից՝ | x | 2935.2 | x | 2935.2 |
| 5122 | - Վարչական սարքավորումներ | 5122 | 2935.2 | x | 2935.2 |
| 6000 | Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող 6100 + տող 6200 + տող 6300 + տող 6400), այդ թվում՝ | x | -2136.0 | x | -2136.0 |
| 6400 | ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ(տող 6410 + տող 6420 + տող 6430 + տող 6440), այդ թվում՝ | x | -2136.0 | x | -2136.0 |
| 6410 | ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 8411 | -2136.0 | x | -2136.0 |

# ՀԱՏՎԱԾ 4
# ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ)

(հազար դրամով)

| Տողի N | Ծախսերի անվանումը | Ընդամենը (ս.4+ս.5) | այդ թվում | |
|---|---|---|---|---|
| | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 8000 | ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ (դրական նշանով) ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ (բացասական նշանով)* | -1749.2 | 0.0 | -1749.2 |

# ՀԱՏՎԱԾ 5
# ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

(հազար դրամով)

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումներ | NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 2850 | - ստացված փոխատվությունների գումարի մարում | 6122 | | | |
| 8110 | 1. ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 8111+տող 8120), այդ թվում | | 1749.2 | | 1749.2 |
| 8160 | 2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ (տող 8161 + տող 8170 + տող 8190-տող 8197 + տող 8198 + տող 8199)այդ թվում՝ | | 1749,2 | | 1749.2 |
| 8190 | 2.3. Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը՝ (տող 8191 + տող 8194-տող 8193)այդ թվում՝ | | 1749.2 | | 1749.2 |
| 8191 | 2.3.1. Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ որից՝ | 9320 | | | x |
| 8192 | - ենթակա է ուղղման համայնքի բյուջեի վարչական մասից նախորդ տարում ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված՝ առկա պարտավորությունների կատարմանը | | | | x |
| 8193 | - ենթակա է ուղղման համայնքի բյուջեի ֆոնդային մաս (տող 8191 - տող 8192) | | | | x |
| 8194 | 2.3.2. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի մնացորդը (տող 8195 + տող 8196)որից՝ | 9330 | 1749.2 | x | 1749.2 |
| 8195 | - առանց վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարի | | x | x | |
| 8196 | - վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարը (տող 8193) | | x | x | |
| 8197 | 2.4. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս | | | | |

# ՀԱՏՎԱԾ 6
# ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

(հազա
դրամ

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Տնտեսագիտական դասակարգման հոդված | Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 2100 + տող 2200 + տող 2300 + տող 2400 + տող 2500 + տող 2600 + տող 2700 + տող 2800 + տող 2900 + տող 3000 + տող 3100) | | 20404.3 | 18655.1 | 1749.2 |
| 2100 | 1 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (այլ դասերին չպատկանող) (տող 2110 + տող 2120 + տող 2130 + տող 2140 + տող 2150 + տող 2160 + տող 2170 + տող 2180) այդ թվում՝ | | 16894.3 | 16645.1 | 249.2 |
| 2110 | 1 | 1 | 0 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ որից՝ | | 16652.3 | 16403.1 | 249.2 |
| 2111 | 1 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում | | 16652.3 | 16403.1 | 249.2 |
| | | | | - Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 12800.0 | 12800.0 | 0.0 |
| | | | | - Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ | 4112 | 2158.0 | 2158.0 | 0.0 |
| | | | | - Էներգետիկ ծառայություններ | 4212 | 249.1 | 249.1 | 0.0 |
| | | | | - Կապի ծառայություններ | 4214 | 109.0 | 109.0 | 0.0 |
| | | | | - Տեղակատվական ծառայություններ | 4234 | 40.0 | 40.0 | 0.0 |
| | | | | - Կառավարչական ծառայություններ | 4235 | 252.0 | 252.0 | 0.0 |
| | | | | - Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | 205.0 | 205.0 | 0.0 |
| | | | | - Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 100.0 | 100.0 | 0.0 |
| | | | | - Տրանսպորտային նյութեր | 4264 | 430.0 | 430.0 | 0.0 |
| | | | | - Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Վարչական սարքավորումներ | 5122 | 249.2 | 0.0 | 249.2 |
| 2130 | 1 | 3 | 0 | Ընդհանուր բնույթի ծառայություններ, որից՝ | | 92.0 | 92.0 | 0.0 |
| 2133 | 1 | 3 | 3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | | 92.0 | 92.0 | 0.0 |
| | | | | - Համակարգչային ծառայություններ | 4232 | 92.0 | 92.0 | 0.0 |
| 2160 | 1 | 6 | 0 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող), որից՝ | | 150.0 | 150.0 | 0.0 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2161 | 1 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | | 150.0 | 150.0 | 0.( |
| | | | | - Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր | 4211 | 50.0 | 50.0 | 0.( |
| | | | | - Մասնագիտական ծառայություններ | 4241 | 90.0 | 90.0 | 0.( |
| | | | | - Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 4819 | 10.0 | 10.0 | 0.( |
| 2200 | 2 | 0 | 0 | ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (այլ դասերին չպատկանող) (տող 2210+2220 + տող 2230 + տող 2240 + տող 2250), այդ թվում՝ | | 100.0 | 100.0 | 0.( |
| 2210 | 2 | 1 | 0 | Ռազմական պաշտպանություն, որից՝ | | 50.0 | 50.0 | 0.( |
| 2220 | 2 | 2 | 0 | Քաղաքացիական պաշտպանություն, որից՝ | | 50.0 | 50.0 | 0.( |
| 2221 | 2 | 2 | 1 | Քաղաքացիական պաշտպանություն | | 50.0 | 50.0 | 0.( |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 50.0 | 50.0 | 0.( |
| 2250 | 2 | 5 | 0 | Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող), որից՝ | | 50.0 | 50.0 | 0.( |
| 2251 | 2 | 5 | 1 | Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | | 50.0 | 50.0 | 0.( |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 50.0 | 50.0 | 0.( |
| 2300 | 3 | 0 | 0 | ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ (տող 2310 + տող 2320 + տող 2330 + տող 2340+տող 2350 + տող 2360 + տող 2370), այդ թվում՝ | | 50.0 | 50.0 | 0.( |
| 2320 | 3 | 2 | 0 | Փրկարար ծառայություն, որից՝ | | 50.0 | 50.0 | 0.( |
| 2321 | 3 | 2 | 1 | Փրկարար ծառայություն | | 50.0 | 50.0 | 0.( |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 50.0 | 50.0 | 0.( |
| 2400 | 4 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 2410 + տող 2420 + տող 2430 + տող 2440 + տող 2450+տող 2460 + տող 2470 + տող 2480 + տող 2490), այդ թվում՝ | | -1186.0 | 0.0 | -1186.( |
| 2450 | 4 | 5 | 0 | Տրանսպորտ, որից՝ | | 950.0 | 0.0 | 950.( |
| 2451 | 4 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | | 950.0 | 0.0 | 950.( |
| | | | | - Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | 950.0 | 0.0 | 950.( |
| 2490 | 4 | 9 | 0 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող), որից՝ | | -2136.0 | 0.0 | -2136.( |
| 2491 | 4 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | | -2136.0 | 0.0 | -2136.( |
| 2500 | 5 | 0 | 0 | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող 2510 + տող 2520 + տող 2530 + տող 2540 + տող 2550 + տող 2560), այդ թվում՝ | | 1000.0 | 1000.0 | 0.( |
| 2510 | 5 | 1 | 0 | Աղբահանում, որից՝ | | 1000.0 | 1000.0 | 0.( |
| 2511 | 5 | 1 | 1 | Աղբահանում | | 1000.0 | 1000.0 | 0.( |
| | | | | - Կոմունալ ծառայություններ | 4213 | 1000.0 | 1000.0 | 0.( |
| 2600 | 6 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող 2610 + տող | | 360.0 | 360.0 | 0.( |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2620 + տող 2630 + տող 2640 + տող 2650 + տող 2660), այդ թվում՝ | | | | |
| 2640 | 6 | 4 | 0 | Փողոցների լուսավորում, որից՝ | | 360.0 | 360.0 | 0. |
| 2641 | 6 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | | 360.0 | 360.0 | 0. |
| | | | | - Էներգետիկ ծառայություններ | 4212 | 360.0 | 360.0 | 0. |
| 2800 | 8 | 0 | 0 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող 2810 + տող 2820 + տող 2830 + տող 2840+ տող 2850 + տող 2860), այդ թվում՝ | | 150.0 | 150.0 | 0. |
| 2820 | 8 | 2 | 0 | Մշակութային ծառայություններ, որից՝ | | 150.0 | 150.0 | 0. |
| 2824 | 8 | 2 | 4 | Այլ մշակութային կազմակերպություններ | | 150.0 | 150.0 | 0. |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 150.0 | 150.0 | 0. |
| 2900 | 9 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող 2910 + տող 2920 + տող 2930 + տող 2940+ տող 2950 + տող 2960 + տող 2970 + տող 2980), այդ թվում՝ | | 2736.0 | 50.0 | 2686. |
| 2910 | 9 | 1 | 0 | Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն, որից՝ | | 2736.0 | 50.0 | 2686. |
| 2911 | 9 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | | 2736.0 | 50.0 | 2686. |
| | | | | - Վարչական սարքավորումներ | 5122 | 2686.0 | 0.0 | 2686. |
| 3000 | 10 | 0 | 0 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող 3010 + տող 3020 + տող 3030 + տող 3040 + տող 3050+ տող 3060 + տող 3070 + տող 3080 + տող 3090), այդ թվում՝ | | 300.0 | 300.0 | 0. |
| 3070 | 10 | 7 | 0 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) , որից՝ | | 300.0 | 300.0 | 0. |
| 3071 | 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | | 300.0 | 300.0 | 0. |
| | | | | - Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 300.0 | 300.0 | 0. |
| | | | | - Պահուստային միջոցներ (վարչական բյ.) | 4891 | 0.0 | 0.0 | 0. |